

Հանրային մասնակցության մի քանի մեթոդի մանրամասն ուսումնասիրում

Մոդուլը ներկայացնում և վերլուծում է գործընթացներում կարևոր դերակատարների բացահայտման մասնակցային մոտեցումները: Այն ներկայացնում է արտահայտվելու տարբեր մեթոդներ՝ բացահայտելու դերակատարների տարածական հարաբերությունները բնության և շրջակա միջավայրի հետ:

**Սլայդերը և տեքստը՝ Մարիա Գարսիա-Մարտին
Խմբագիրներ՝ Տաթև Հարոյան, Սիրանուշ Հարությունյան, Գոհար Շահինյան
Խորհրդատուներ՝ Քլաուդիա Բիլինգ, Ալեն Ամիրխանյան
Տեքստը կարդաց Հարություն Դադուրյանը
Վիդեոն պատրաստեց Արգիշտի Ազիզյանը
Լեզուներ՝ հայերեն և անգլերեն
Հրատարակման տարի՝ 2021 թ.**

Այս մոդուլը մշակվել է «Հայ-գերմանական ցանց՝ էկոհամակարգերի ծառայությունների բարելավման նպատակով ԱՏՀ հանրային մասնակցության խթանում՝ որպես կենսաբազմազանության պահպանման և կայուն զարգացման ապահովման միջոց» (GAtES) ծրագրի շրջանակում: ace.aua.am/gates

Ֆինանսավորող կազմակերպություն՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության ֆինանսավորմամբ

Ուսումնառության նպատակները

Բաժին 1. ծանոթանալ մասնակցային մեթոդներին՝ առանցքային դերակատարներին ճանաչելու և տրված կայունության մարտահրավերի հետ նրանց կապը հասկանալու համար:

Բաժին 2. իմանալ, թե ինչ մոտեցումներ է պետք կիրառել հասկանալու համար, թե ինչպես են մարդիկ գնահատում բնությունը և իրենց շրջակա միջավայրը:

Բաժին 3. հողօգտագործման վերաբերյալ հավանական հակասությունները բացահայտելու և տարածքի պլանավորման վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելուն նպաստելու համար սովորել, թե ինչպես պետք է հասկանալ համայնքի և տեղի շրջակա միջավայրի տարածական հարաբերությունները:

Բաժին 4. ծանոթանալ արտահայտման տարբեր միջոցներին, որոնք մասնակիցներին հնարավորություն են ընձեռում արտահայտվել պատկերների միջոցով, ինչպես նաև մեծացնել գործընթացում նրանց ներգրավվածությունը:

Մոդուլի կառուցվածքը

Մոդուլի բաժինները

Բաժին 1. ներկայացվածության ապահովում. շահագրգիռ կողմերի վերլուծություն

Առաջադրանք

Բաժին 2. արժեքների վերհանում. Freelisting կամ ազատ թվարկման մեթոդ

Առաջադրանք

Բաժին 3. տարածական բաղադրիչի ներառումը. մասնակցային քարտեզագրում

Առաջադրանք

Բաժին 4. արտահայտման տարբեր միջոցների կիրառում. Photovoice կամ լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդ

Առաջադրանք

Բաժին 1

Ծանոթանալ մասնակցային մեթոդներին՝ առանցքային դերակատարներին
ճանաչելու և տրված կայունության մարտահրավերի հետ նրանց կապը
հասկանալու համար:

Ներկայացվածության ապահովում. շահագրգիռ կողմերի վերլուծություն

1. Շահառուների քարտեզագրման և սոցիալական ցանցի վերլուծության կարևորությունը
2. Շահառուների վերլուծություն. ներածություն
3. Net Map գործիք. ինչպե՞ս կիրառել
4. Net Map գործիք. օրինակ
5. Գործնական կիրառություն

Շահագրգիռ կողմերի վերլուծության կարևորությունը

- Տարածքների կառավարման կայունության մարտահրավերներին անդրադառնալը պահանջում է դիտարկել և ներառել գործընթացով շահագրգռված մարդկանց և կայացված որոշման վերջնարդյունքները:
- Կարևոր է նաև հասկանալ և հաշվի առնել, թե ինչպես են իրենք կապված միմյանց հետ, այսինքն՝ նրանց սոցիալական ցանցը:




Շահագրգիռ կողմերի վերլուծություն. ներածություն

- Օգնում է հասկանալ, թե ովքեր են առանցքային դերակատարները և նրանց միջև առկա կապերը, որոնք վերաբերում են քննարկվող խնդրին:
- Վերաբերում է «գործիքակազմին, որն օգտագործվում է շահագրգիռ կողմերի բացահայտման և նկարագրության համար՝ ելնելով նրանց հատկանիշներից, միմյանց հետ ունեցած հարաբերություններից և տրված խնդրի կամ ռեսուրսի վերաբերյալ իրենց ունեցած հետաքրքրությունից»:
- Թույլ է տալիս պատասխանել հետևյալ հարցերին՝
 - Որո՞նք են ամենաազդեցիկ դերակատարները, ի՞նչն է նրանց ազդեցիկ դարձնում և որո՞նք են նրանց օրակարգերը:
 - Արդյո՞ք կան մարգինալացված դերակատարներ, ինչպե՞ս է հնարավոր նրանց գտնել և հզորացնել:
 - Ինչպե՞ս մեծացնել համագործակցությունը և հաղորդակցությունը, ո՞ր դերակատարները կարող են օգնել հաղորդակցության հարցում:


Աղբյուր՝ Reed et al, 2009

Շահագրգիռ կողմերի վերլուծություն. ներածություն


1. Շահագրգիռ կողմերի բացահայտում



2. Շահագրգիռ կողմերի դասակարգում




3. Շահագրգիռ կողմերի հարաբերությունների ուսումնասիրում



Net Map գործիք. ներածություն



- Շահագրգիռ կողմերի, նրանց միջև հարաբերությունների, նրանց նպատակների և «ազդեցությունների» բացահայտման և վիզուալիզացման մեթոդ
- Իրականացվում է հարցազրույցների կամ աշխատաժողովների միջոցով
- Չի պահանջում տեխնոլոգիաներ և մեծ ծախսեր
- Քննարկման և ուսումնառության գործիք է



Աղբյուր՝ Dr. Jennifer Hauck, CoKnow Consulting

Net Map գործիք. ինչպե՞ս կիրառել



Net Map հարցազրույցի գործընթացը

- Ո՛վ ունի ազդեցություն խնդրի հարցում: Թվարկեք բոլոր համապատասխան դերակատարներին:
- Ո՞ր դասակարգին են համապատասխանում (տեսակներ, մակարդակներ, ոլորտներ): Օգտագործեք գույներ և սիմվոլներ:
- Նկարեք կամ գծեք կապերը կամ ցանցերը (օրինակ՝ տեղեկատվություն, ֆինանսներ):
 - Տարբեր ցանցերի համար տարբեր գույներ
 - Երկկողմանի կապի համար՝ երկգլխանի սլաք
- Որո՞նք են նրանց նպատակները:

Աղբյուր՝ [Dr. Jennifer Hauck, CoKnow Consulting](#)


ՔՍՅԼ 1



ՔՍՅԼ 2



ՔՍՅԼ 3



Net Map գործիք. գործնական կիրառություն

Schiffer E and Hauck J. (2010)

Net-Map: Collecting Social Network Data and Facilitating Network Learning through Participatory Influence Network Mapping.

Field Methods 22(3): 231-249.

Net Map գործիք. գործնական կիրառություն

Սպիտակ Վոլտայի ավազանի խորհուրդ, Գանա. տնտեսական և շրջակա միջավայրի կայունության կոորդինացմանն ուղղված խորհրդատվական բազմաշահառու կազմակերպություն:

Net Map վարժություն՝ հասկանալու համար ցանցի տարբեր դերակատարների ազդեցությունը և նպատակները, որպեսզի հնարավոր լինի տրամադրել կայունության ապահովման վերաբերյալ խորհուրդներ և առաջարկներ:

1. «Ո՛վ կարող է ազդեցություն ունենալ ավազանի խորհրդի նպատակներին հասնելու վրա»
2. Կապերը՝ իշխանության շղթա, ֆինանսական միջոցների հոսք, խորհրդատվության տրամադրում, տեղեկատվական հոսք:
3. «Որքա՞ն մեծ ազդեցություն կարող են ունենալ այս դերակատարները ավազանի խորհրդի նպատակներին հասնելու հարցում»
4. Հարցազրույցի մասնակիցներին հարցրել են, արդյո՞ք դերակատարները ունեին զարգացման, բնապահպանական նպատակներ, թե՛ երկուսն էլ:



Աղբյուր՝ [Eva Schiffer and Hauck 2010](#)

Net Map գործիք. գործնական կիրառություն

Վերջնական քարտեզի վիզուալացում և քննարկում՝ մասնակիցների միջև մտքերի փոխանակումը և նրանց սոցիալական ուսումնառությունը դյուրին դարձնելու համար: Հասկանալ խնդրի վերաբերյալ տարբեր տեսանկյունները:

Միասին անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- Ո՞ր ցանցի կապերը պետք է ամրապնդվեն՝ պետական կառավարման մարտահրավերները հաղթահարելու համար:
- Ինչպե՞ս կարելի է հզորանացնել մարզինալացված շահագրգիռ կողմերին կամ կապել նրանց ցանցերի այլ դերակատարների հետ:
- Արդյո՞ք կան դերակատարներ, ովքեր ունեն հնարավորություն ծառայելու որպես գիտության աղբյուր կամ որպես միջնորդ՝ կոնֆլիկտների ժամանակ:
- Ցանցի ո՞ր դերակատարները կարող են նպատակին հակառակ գործել կամ կոնֆլիկտներ առաջացնել:



Աղբյուր՝ Eva Schiffer, IFPRI, CGIAR Challenge Program for Water and Food, Washington, November 2007

Net Map գործիք. գործնական կիրառություն

Կիրառե՛ք Net Map-ը ձեր գործընկերների, ընկերների կամ ընտանիքի անդամների հետ:

1. Կազմեք փոքր խումբ, վերցրեք մի մեծ թուղթ, գունավոր կաշուն թղթեր, երեք տարբեր գույնի գրիչներ և մետաղադրամներ (աշտարակների համար):
2. Սահմանեք Net Map գործիքի հարցը, օրինակ՝ *Ն՞վ կարող է ազդել կամ օգնել մեզ հասնել նպատակին փանը կամ հարևանությամբ* (օրինակ՝ նվազեցնել պլաստիկի սպառումը տանը կամ նվազեցնել սննդի վատնումը) :
3. Սահմանեք դերակատարների միջև այն կապերը, որ ցանկանում եք ուսումնասիրել (2-ից՝ 4), օրինակ՝ իշխանության շղթան, խորհուրդներ, ֆինանսական միջոցների հոսք:
4. Իրականացրեք քարտեզագրում և պատկերեք վերջանական քարտեզը՝ տալով նախորդ սլայդում ներկայացված հարցերը (կապերը, որ պետք է ամրապնդվեն, մարգինալացված դերակատարները, այն դերակատարները, ովքեր կարող են խոչընդոտել նպատակի իրականացմանը և այլն):


ՔՐՅԼ 1



ՔՐՅԼ 2



ՔՐՅԼ 3



Առաջադրանք

1. Մի շարք ուսումնասիրություններ կան, որ իրականացրել են սոցիալական ցանցի վերլուծություն: Հավելյալ տեղեկատվության համար կարող եք դիտարկել ստորև ներկայացված աշխատությունները.
 - Reed, MS; Graves, A; et al. (2009). Who's in and why? A typology of stakeholder analysis methods for natural resource management. *J Environmental Management* 90(5):1933-49
 - Colvin, RM.; Witta, GR.; Lacey, J. (2016). Approaches to identifying stakeholders in environmental management: Insights from practitioners to go beyond the 'usual suspects'. *Land Use Policy* 52: 266-276
 - Vogler, D.; Macey, S.; Sigouin, A. (2017). Stakeholder Analysis in Environmental and Conservation Planning. *Lessons in Conservation* 7: 5-16
2. Դիտեք հետևյալ տեսանյութը, թե ինչպես կարող է սոցիալական ցանցի վերլուծությունն օգնել կառավարել ջրբաժանի հետ կապված աշխատանքները.

<https://www.globalwaters.org/resources/videos/SWS/sustainable-wash-systems-social-network-analysis>



Բաժին 2

Իմանալ, թե ինչ մոտեցումներ է պետք կիրառել հասկանալու համար, թե ինչպես են մարդիկ գնահատում բնությունը և իրենց շրջակա միջավայրը:

Արժեքների վերհանում. Freelisting կամ ազատ թվարկում

1. Արժեքների վերհանման կարևորությունը
2. Ազատ թվարկում կամ Freelisting. ներածություն
3. Ազատ թվարկում կամ Freelisting. ինչպե՞ս իրականացնել
4. Ազատ թվարկում կամ Freelisting. օրինակ
5. Գործնական կիրառություն
6. Առաջադրանք

Արժեքների վերհանման կարևորությունը

- «Գնահատումը, ավելի լայն իմաստով՝ «կարևորություն տալը», բնական ռեսուրսների և հողօգտագործման վերաբերյալ որոշումների անբաժան մասն է կազմում»:
- Բնությանը վերագրվող համընդհանուր արժեքը հասկանալն օգնում է՝
 - Կառավարման մեջ միջամտությունները համաձայնեցնել մարդկանց արժեքների հետ:
 - Բացահայտել կառավարման մոտեցումների հետ համաձայնեցված և հակասող արժեքները:
- Այս արժեքների վերհանումը պահանջում է մասնակցային մոտեցումներ:

Աղբյուրներ՝ [Jacobs et al 2016](#), [Arias-Arevalo et al 2017](#)

Freelisting. ներածություն



- Freelisting հարցազրույցներն ուսումնասիրում են, թե ինչ ձևերով են տարբեր մշակութային պատկանելիությամբ մարդիկ մեկնաբանում և գնահատում որևէ ոլորտի արժեքները (օրինակ՝ իրենց սիրելի սնունդը, լանդշաֆտը, դեղաբույսերը):
- Հարցազրույցի ժամանակ մարդկանց խնդրում են ցանկացած հերթականությամբ թվարկել կոնկրետ ոլորտի հետ կապված այն առարկաները կամ երևույթները, որ այդ պահին մտաբերում են:
- Քանի որ բոլոր մշակույթներն օգտագործում են որոշակի դասակարգման համակարգ, հետազոտողը փորձում է հասկանալ, թե որ դասակարգերն են կարևոր մարդկանց համար, ինչպես են դրանք դասավորված և ինչ արժեքներ են դրանց վերագրվում:

Աղբյուր՝ Newig and Puri 2010

Freelisting. ներածություն



Freelisting-ը հիմնված է երեք ենթադրությունների վրա՝

1. Երբ մարդիկ ազատ կերպով որևէ բան են թվարկում, նրանք հակված են առաջինը թվարկել իրենց ծանոթ առարկաները կամ երևույթները:
2. Այն մարդիկ, ովքեր լավ են տեղեկացված թեմայից, թվարկում են ավելի մեծ թվով առարկաներ կամ երևույթներ, քան քիչ տեղեկացված մարդիկ:
3. Մասնակիցների մեծամասնության կողմից թվարկված առարկաները կամ երևույթները ցույց են տալիս, որ դրանք շատ հայտնի են այդ տարածքում:

Freelisting. ինչպե՞ս իրականացնել



Համակարգված հարցազրույցների միջոցով, որի ընթացքում մասնակիցները տրամադրում են այն առարկաների կամ երևույթների ցանկը, որոնք կապված են կոնկրետ թեմայի հետ:

Օրինակ՝ «Ինչպե՞ս է տեղի լանդշաֆտը նպաստում ձեր բարօրությանը: Խնդրում ենք հակիրճ ներկայացրեք այն ամենը, ինչ ձեր մտքով անցնում է»:

Ցուցումներ. ինչպե՞ս իրականացնել freelisting կամ ազատ թվարկում

Freelisting-ն իրականացվում է անհատների հետ՝ բանավոր կերպով կամ նրանց խնդրելով գրավոր կերպով ինքնուրույն լրացնել ազատ թվարկման թերթիկը:

1. Բոլոր մասնակիցներին նույն հարցը տվեք. «Խնդրում ենք նշել (կամ գրեք) այնքան X (ոլորտի անունը), որքան կարող եք մտաբերել» կամ «Խնդրում ենք թվարկել բոլոր X (ոլորտի անունը), որ դուք գիտեք»:
 - I. Երբ դադարում են թվարկել, նրանց խրախուսեք իրենց պատրաստած ցանկով անցնել՝ ավելի շատ առարկաներ մտաբերելու համար:
 - II. Կախված Ձեր նպատակից՝ կարող եք սահմանափակել թվարկումների քանակը:
 - III. Խնդրում ենք նկատի ունենալ, որ Freelisting-ը հարցնում է մարդկանց, թե *ինչ գիտեն*, այլ ոչ թե *ինչ են օգտագործում* կամ *անում*: Սրանք այլ հարցեր են, որոնք սովորաբար հետո են հարցնում:
2. Գրի առեք կամ ծայնագրեք պատասխանները այն հերթականությամբ, որով հարցվողները պատասխանել են և այն լեզվով, որով պատասխանել են (այստեղ հնարավոր է թարգմանչի կարիք լինի): Ձայնագրությունները հնարավորություն են տալիս ստուգել գրավոր արձանագրությունները: Ցանկն ինքնուրույն մի՝ «ուղղեք». դա պետք է անեք հարցվողների հետ:
3. Freelisting իրականացնելուց հետո հարցազրույցներ անցկացրեք՝ նշված առարկաներն ավելի մանրամասն քննարկելու համար: Հավաքագրեք այդ առարկաների հոմանիշները, նկարագրությունը, կիրառությունները և յուրաքանչյուրի կարևորությունը հարցվողների համար:

Աղբյուր՝ Newig and Puri 2010

Freelisting. ինչպե՞ս իրականացնել



Ցանկը վերլուծվում է հասկանալու համար՝

1. թե ո՞ր առարկաներ կամ երևույթներն են նշվում այդ ոլորտում
2. որո՞նք են ամենակարևորները. հաճախականությունը, ցուցակում ունեցած իրենց տեղերի միջինը և կարևորությունը
3. թե գիտելիքի կամ արժեքների որքա՞ն տարբերություն կա խմբի անդամերի միջև

Freelisting. ինչպե՞ս իրականացնել



Պտղատու ծառերի մարգագետինների կողմից տրամադրված էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ ազատ թվարկման վերլուծության օրինակ: Գույներով նշված են էկոհամակարգային ծառայությունների դասակարգերը: Աղբյուրը՝ Աննա Սմարանդա Ստեֆըն

Էկոհամակարգային ծառայություն	Հաճախականություն (պատասխանողների քանակ)	Հաճախականություն (պատասխանողների %)	Միջին	Կարևորություն (salience)	Դասակարգում ըստ կարևորության (salience)
Գեղագիտություն	34	52.31	1.94	0.269	1
Ժամանց, մտավոր ու ֆիզիկական առողջություն	33	50.77	2.18	0.233	2
Անունը մարդկանց համար	31	47.69	2.32	0.205	3
Կենսաբազմազանություն	31	47.69	2.71	0.176	4
Բնական միջավայր	18	27.69	3.72	0.102	5
Այլ	8	12.31	2.13	0.058	6
Բնապահպանություն	8	12.31	3	0.041	7
Անունը կենդանիների համար	9	13.85	3.38	0.041	8
Օդի որակի կարգավորում	7	10.77	3.14	0.034	9
Աշխատանք/եկամուտ տարածաշրջանի ֆերմերների համար	11				
Լանդշաֆտի բազմազանություն	5				
Վայելք	3				

$$\text{Կարևորություն (Salience)} = \frac{\text{Հաճախականություն}}{\text{Պատասխանողների քանակ} \times \text{միջին}}$$

Freelisting. օրինակ



Bieling, C.; Plieninger, T.; Pirker, H.; Vogl, CR. (2014).
**Linkages between landscapes and human well-being: An empirical
exploration with short interviews**
Ecological Economics 105: 19–30

Freelisting. օրինակ



Ուսումնասիրությունը հետազոտում է՝

- իրենց հարազատ լանդշաֆտի և իրենց բարօրության միջև եղած կապերը, որոնք մարդիկ նկատում են:
- ինչպե՞ս են այս կապերը տարբերվում տարբեր սոցիալական փոփոխականներում:

262 առերես հարցազրույցներ են իրականացվել Գերմանիայի և Ավստրիայի չորս վայրերում: Հարցն էր՝

«Ինչպե՞ս է տեղի լանդշաֆտը նպաստում ձեր բարօրությանը: Խնդրում ենք հակիրճ ներկայացնել այն ամենն, ինչ անցնում է ձեր մտքով»:



Freelisting. օրինակ




Լակոզաֆտի արժեքների տեսակների կարևորությունը և միջինը դիրքը նշած պատասխանողների տոկոսը (յուրաքանչյուր տեսակի համար ներկայացված են 10 ամենամեծ կարևորություն ունեցող ատարկաները, n=262)

		Նշել է մասնակիցների %-ը	Միջին	Կարևորություն (salience)	Դասակարգում ըստ կարևորության (salience)	
Տեսակներ	Սարեր	21.8	3.98	0.0546	3	
	Անտառ, ծառածածկ տարածք	17.9	4.45	0.0403	5	
	Ջրային տարածքներ	10.3	2.85	0.0361	9	
	Ծառեր	6.1	3.25	0.0188	17	
	Մարգագետիններ	9.9	6.5	0.0153	21	
	Բլուրներ	3.8	2.7	0.0141	23	
	Հովիտ սրնոստսար ա այլ ենթակատուցվածքներ	5	3.92	0.0127	26	
	Կենդանիներ	6.5	5.35	0.0121	28	
	Կենդանիներ	10.7	9.43	0.0113	30	
	Հարթավայրեր	1.9	2	0.0095	35	
	Գործելակերպեր (ներ.՝ Արշավ գործընթացներ)	Արշավ	30.2	7.48	0.0403	6
		Հեծանիվ վարել	12.6	5.15	0.0246	12
		Ջրումնել	15.3	7.18	0.0213	16
Մշակել		9.5	5.92	0.0161	20	
Եղանակներ, բնության ոլորներ		9.5	8.08	0.0118	29	
Վազք, նորդիկական քայլ		4.6	5.17	0.0089	36	
Ակտիվ լինել, սպորտով զբաղվել		5.7	6.47	0.0089	37	
Աշխատել		6.1	6.94	0.0088	38	
Գիտակցաբար ընկալել		5.3	9.14	0.0058	59	
Սար մագցել		6.1	10.81	0.0057	62	
Հարաբերություններ		Գեղեցկություն	36.6	3.59	0.102	1
		Բնական, բնություն	31.3	4.17	0.075	2
		Հանգստություն	23.3	4.74	0.0491	4
	Կապվածություն տարածքին, զգացողություն կարծես տանն են	17.2	4.53	0.0379	7	
	Անաղարտություն, ամբողջականություն	16	4.36	0.0368	8	
	Ժամանց, հանգիստ	19.1	5.4	0.0353	10	
	Կանաչ	9.5	3.48	0.0274	11	
	Բազմազանություն	7.3	3.05	0.0238	13	
	Լավ օդ	13	6.62	0.0231	14	
	Որևէ բան անելու կամ զգալու վայր	10.7	4.79	0.0223	15	

Ֆերմերներ

Այցելուներ



Freelisting. օրինակ



- Հարցազրույցներն անցկացվել են շատ կարճ ժամանակահատվածում:
Մասնակցության ցանկությունը մեծ էր և մարդիկ կարծես տրված հարցերի հետ դժվարություններ չունեցան:
- Այս մոտեցման շնորհիվ թեմայի վերաբերյալ մեծ ծավալի և կարևոր տվյալներ հավաքագրվեցին:
- Որոշ մարդիկ նշել էին, որ բարձրացված հարցերի շուրջ մտածելն իրենց համար հետաքրքիր էր և ոգևորող:

Freelisting. գործնական կիրառություն



Կիրառեք Freelisting գործիքը՝ հարցազրույցներ անցկացնելով ձեր գործընկերների, ընկերների և ընտանիքի անդամների հետ:

1. Որոշեք ուսումնասիրության թեման կամ ոլորտը (օրինակ, թե ինչն են սիրում մարդիկ Երևանում):
2. Որոշեք հարցազրույցի ձևաչափը (բանավոր կամ գրավոր) և հավելյալ հարցերը, որոնք կարող են կարևոր լինել արդյունքները մեկնաբանելիս (օրինակ՝ որտե՞ղ են նրանք ապրում, ե՞րբ են ապրել Երևանում):
3. Խնդրեք մասնակիցներին թվարկել ամենը, ինչ անցնում է իրենց մտքով:
4. Վերլուծեք արդյունքները պարզելու համար, թե՛
 - ո՞ր ասպեկտներն են նշվել: Կա՞ր ինչ-որ ասպեկտ, որը դուք չէիք ակնկալում: Ո՞վ էր դա նշել:
 - ո՞ր ասպեկտներն են նշվել մարդկանց մեծամասնության կողմից:
 - արդյո՞ք մասնակիցների միջև կային տարբերություններ (օրինակ՝ այդ տարածքում երկար տարիներ ապրող մարդիկ ավելի շատ էին նշում այս կամ այն ասպեկտը, քան այն մարդիկ, ովքեր նոր էին տեղափոխվել):
 - ինչպե՞ս կարող էր այս տեղեկատվությունն օգնել Երևանի պլանավորման հարցում:

Առաջադրանք

1. Եթե ցանկանում եք արժեքների վերհանման կարևորության մասին իմանալ ավելին, կարդացեք՝
 - Arias-Arévalo, P.; B. Martín-López; Gómez-Baggethun, E. (2017). Exploring intrinsic, instrumental, and relational values for sustainable management of social-ecological systems. *Ecology and Society* 22(4): 43.
 - Jacobs, S; Dendoncker, N.; Martín-López, B; et al . (2016). A new valuation school: Integrating diverse values of nature in resource and land use decisions. *Ecosystem Services* 22(B): 213-220,
2. Եթե ցանկանում եք շատ լավ տիրապետել Freelisting գործիքին, ապա կարդացեք՝
 - Newing, H. and Puri RK (2011). Documenting local environmental knowledge and change. In Newing, H., Eagle, C., Puri, R., Watson, C. *Conducting Research in Conservation*. London: Routledge, Chapter 8: 126-152
3. Եթե ցանկանում եք ոգեշնչվել, կարող եք սկսել ասորև նշված գրքից՝
 - Fagerholm N, Martín-López B, Torralba M, et al. (2019). Perceived contributions of multifunctional landscapes to human well-being: Evidence from 13 European sites. *People and Nature* 2: 217–234.



Բաժին 3

Հողօգտագործման վերաբերյալ հավանական հակասությունները բացահայտելու և տարածքի պլանավորման վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելուն նպաստելու համար սովորել, թե ինչպես պետք է հասկանալ համայնքի և տեղի շրջակա միջավայրի տարածական հարաբերությունները:

Տարածական բաղադրիչի ներառումը. մասնակցային քարտեզագրում

1. Տարածական բաղադրիչի դիտարկման կարևորությունը
2. Մասնակցային քարտեզագրման մոտեցումների ներկայացում
3. PPGIS կամ Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ. ինչպե՞ս կիրառել
4. PPGIS կամ Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ. օրինակ
5. Գործնական կիրառություն

Տարածական բաղադրիչի կարևորությունը

Տարածքի կամ բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ կայացված որոշումներից շատերը հիմնված են տարածական տեղեկատվության վրա:



- Տեղագրության, հիդրոլոգիայի, ենթակառուցվածքների ցանցերի և այլնի վերաբերյալ որոշումները հիմնված են փորձագետների (աշխարհագրագետներ, երկրաբաններ, հատակագծողներ և այլն) կարծիքների վրա:
- Արդյո՞ք հաշվի են առնվում սոցիալ-մշակութային տարածական ասպեկտները, ինչպիսիք են այն տարածքները, որոնք նպաստում են մարդկանց բարօրությանը և տեղի էկոլոգիային, տարածքները որոնք կարևոր են տեղի բնակչության համար: Հետազոտողները դժվարությամբ կկարողանան այս տեղեկատվությունն ինքնուրույն հավաքագրել. այն պետք է մարդիկ տրամադրեն:

Մասնակցային քարտեզագրումը նպատակ է հետապնդում ներգրավել տեղի համայնքների և անհատների փորձագիտական տարածական գիտելիքները և ձգտումները՝ որոշումներ կայացնելու գործընթացի մեջ:

PPGIS. ներածություն



Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը (PPGIS) մասնակցային քարտեզագրման մոտեցում է, որը շահագրգիռ կողմերի տրամադրած տվյալները հավաքագրելու, վերլուծելու և վիզուալիզացնելու համար օգտագործում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը:



PPGIS. ներածություն



Այն կիրառվել է մի քանի համատեքստում՝

- Համայնքի և շրջակա տարածքների պլանավորում
- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարում
- Տեղական դերակատարների նույնականացման արժեքները և նախընտրությունները
- Էկոհամակարգային ծառայությունների քարտեզագրում
- Էկոլոգիական և տեղական ավանդական գիտելիքների պահպանում
- Ապագա սցենարի պլանավորում

PPGIS. ինչպե՞ս կիրառել



Ձևաչափի ընտրություն՝

- Առերես, անհատական հարցումներ, առցանց, փոստի միջոցով
- Սեմինարի համատեքստում




PPGIS. ինչպե՞ս կիրառել



Ձևաչափի ընտրություն՝

- Օգտագործել առցանց հարցում և քարտեզ
- Օգտագործել թղթե քարտեզ և կաշուն թղթեր




PPGIS. Ինչպե՞ս կիրառել



Որոշել այն տարածական հատկանիշները, որոնք պետք է քարտեզագրել՝

- Լանդշաֆտի արժեքները և հատուկ վայրերը
- Էկոհամակարգային ծառայությունները
- Չարգացման նախընտրությունները
- Ազգային պարկի փորձը
- Կլիմայի փոփոխության ռիսկերը
- Տրանսպորտային միջանցքի որակները
- Քաղաքային այգիների և բացօթյա տարածքների արժեքները
- Լանդշաֆտի վիճակի մասին գիտելիքը
- Ժամանցի ռեսուրսները



(Brown 2012)


Աղբյուր՝ zuerawalkscape.blogspot.com/2010/05/narrativas-espaciales-para-una.html

PPGIS. ինչպե՞ս կիրառել



Որոշել, թե ինչպես պետք է ներկայացնել տարածական հատկանիշները քարտեզի վրա՝

- Գծեր
- Կետեր
- Պոլիգոններ




PPGIS. ինչպե՞ս կիրառել



Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ՝ տվյալների բազա

Հատկանիշների տարածական տվյալներ (shapefile)



Տեղեկատվություն մասնակիցների մասին (excel file)

	A	F	CS	CT	CU	CV	CW
1	respondent	Gender	Year of birth	We ne	We ne	We ne	We ne
227	8	Female	1987	0	0	0	0
228	13	Male	1962	0	0	0	1
229	23	Female	1971				
230	34	Female	1952				
231	36	Male	1962				
232	50	Male	1946	0	0	0	1
233	60	Female	1957	0	0	0	1
234	68	Female	1966	0	0	0	0
235	70	Female	1952	0	0	0	0
236	84	Female	1982	0	0	0	0
237	87		1948	0	0	0	0
238	88	Male	1988	0	0	0	0
239	94	Male	1954	0	0	0	1
240	95	Male	1957	0	0	0	1
241	101	Female	1971				

PPGIS. Ինչպե՞ս կիրառել



Վերլուծություն

- Ինչպե՞ս են քարտեզագրված վայրերը բաշխված տարածական առումով: Արդյո՞ք դրանք կենտրոնացված են կոնկրետ վայրում, թե՞ սփռված են տարբեր վայրերում:
- Կենսաֆիզիկական ինչպիսի՞ տեղեկատվությունը կարող է օգնել բացատրել տարածական այս միտումները (օրինակ՝ հասանելիությունը, հողային ծածկույթը):
- Սոցիալ-մշակութային ինչպիսի՞ գործոնները կամ մասնակիցների ինչպիսի՞ առանձնահատկությունները կարող են բացատրել այս տարածական միտումները:



PPGIS. օրինակ




García-Martín, M.; Fagerholm, N.; Bieling, C.; ... and Plieninger, T. (2017).
Participatory mapping of landscape values in a Pan-European perspective.
Landscape Ecology, 32(11): 2133–2150

PPGIS. օրինակ




Նպատակն էր վերլուծել, թե ինչպես են լանդշաֆտի արժեքներն ընկալվում Եվրոպական գյուղական բնակավայրերում, և թե ինչպես է այս ընկալումը կապված լանդշաֆտի կենսաֆիզիկական առանձնահատկությունների և սոցիալ-տնտեսական հենքի հետ



PPGIS. օրինակ



Լանդշաֆտի ամենաշատ և ամենաքիչ քարտեզագրված արժեքները:




PPGIS. օրինակ



Լանդշաֆտի արժեքների ընկալման տարածական օրինաչափությունները

Տարածական առումով կենտրոնացված/հավաքականորեն ընկալված

Սփռված/անհատականորեն ընկալված



Մշակութային ժառանգություն



Տեղական արտադրություն



Բացօթյա ժամանց



Սոցիալական փոխազդեցություն



Ոգեշնչում



Գոյություն

PPGIS. օրինակ




Կենսաֆիզիկական
լանդշաֆտի նախընտրելի
առանձնահատկությունները
և տարրերը

Քաղաքային կենտրոններ



Մշակութային ժառանգություն



Բնական միջավայր



Հանրային ուղիներ





PPGIS. օրինակ



Լանդշաֆտի արժեքների ընկալման և մասնակիցների առանձնահատկությունների միջև կապը

Տարիքով մասնակիցներն ավելի շատ նկատում են՝



Մշակույթ




Տեղական արտադրություն



Բերքահավաք

Հողատարածքի սեփականատերերն ավելի շատ նկատում են՝



PPGIS. օրինակ



Աշխատաժողովի ընթացքում արդյունքները ներկայացնելը բնակչության բարօրության համար կարևոր տարածքների ավելի լավ պահպանման վերաբերյալ հետաքրքիր քննարկման առիթ հանդիսացավ:

Որոշումների կայացման գործընթացում տեղի բնակչությանը ներգրավելու և նրանց գիտելիքները, փորձը և ձգտումները հաշվի առնելու հետաքրքիր մոտեցում է:



Առաջադրանք

1. Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգերի մասին շատ ուսումնասիրություններ կան: Ավելին սովորելու համար կարող եք սկսել ստորև նշված ուսումնասիրություններից՝

- Brown, Greg (2012). Public Participation GIS (PPGIS) for regional and environmental planning: reflections on a decade of empirical research. *Journal of Urban and Regional Information Systems Association* 25 (2) :7-18.
- Wolf, I.; Wohlfart, T.; Brown, G.; Lasa, AB (2015). The use of public participation GIS (PPGIS) for park visitor management: A case study of mountain biking. *Tourism Management* 51: 112-130

2. Դիտե՛ք տեսանյութ այն մասին, թե ինչպես կարող է Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը փոխել և հզորացնել տեղական համայնքը՝ <https://vimeo.com/6537312>



Բաժին 4

Ծանոթանալ արտահայտման տարբեր միջոցներին, որոնք մասնակիցներին հնարավորություն են ընձեռում արտահայտվել պատկերների միջոցով, ինչպես նաև մեծացնել գործընթացում նրանց ներգրավվածությունը:

Արտահայտման տարբեր միջոցների կիրառում. Photovoice մեթոդ

1. Արտահայտման տարբեր միջոցների կիրառման հնարավորության կարևորությունը
2. Photovoice կամ Արտահայտում լուսանկարների միջոցով. ներածություն
3. Photovoice կամ Արտահայտում լուսանկարների միջոցով. ինչպե՞ս է այն կատարվում
4. Photovoice կամ Արտահայտում լուսանկարների միջոցով. օրինակ
5. Գործնական կիրառություն

Արտահայտման տարբեր միջոցների կիրառման կարևորություն



Գրելուց կամ պատմելուց տարբերվող միջոց օգտագործելը կարող է զարգացնել տեղի համայնքի ստեղծագործ միտքը և ինքնաարտահայտման կարողությունները:

Պատկերի օգտագործումը ինքնաարտահայտման, հաղորդակցման և հզորացման զորեղ միջոց է՝

- Հասանելի է գրել կամ կարդալ չիմացող մարդկանց համար
- Լուսանկարները ինքնաբացատրական բնույթ ունեն և կարող են ֆիքսել տեղանքը և պահերը
- Լուսանկարները մասնակցային գործընթացի շատ հետաքրքիր վերջնարդյունքներ են, որոնցով կարելի է հեշտությամբ կիսվել

Հնարավորություն ընձեռեք «ընկալել աշխարհը այն մարդկանց տեսանկյունից, ում կյանքը տարբերվում է աշխարհը պատկերացնելու միջոցները վերահսկող մարդկանց կյանքից»

Աղբյուր՝ Wang and Burris 1998

Photovoice մեթոդ. ներածություն



«Լուսանկարների միջոցով արտահայտվելը մի գործընթաց է, որի միջոցով մարդիկ կարող են բացահայտել, ներկայացնել և հզորացնել իրենց համայնքը՝ օգտագործելով հատուկ լուսանկարչական տեխնիկա: Գործընթացի ժամանակ մարդկանց ֆոտոխցիկներ են տալիս, որի օգնությամբ նրանք կարող են արձանագրել ամեն ինչ և հանդես գալ որպես իրենց սեփական համայնքում փոփոխություն նախաձեռնողներ»:

Նպատակներ՝

1. Հնարավորություն տալ մարդկանց հասկանալ իրենց համայնքի ուժեղ կողմերն ու մտահոգությունները և մտածել դրանց մասին:
2. Խթանել կարևոր հարցերի շուրջ կառուցողական երկխոսություն և իրազեկվածություն
3. Կապ հաստատել քաղաքականություն մշակողների հետ:

Աղբյուր՝ Wang and Burris 1998)

Photovoice մեթոդ. ինչպե՞ս է այն կատարվում



Մասնակիցներին խնդրում են բարձրացված խնդրին առնչվող լուսանկարներ անել, որոնք այնուհետև քննարկվում են:

Քայլեր

1. Ուսումնասիրության համար համայնքի խնդիրներից մեկի ընտրություն
2. Մասնակիցների հավաքագրում
3. Մասնակիցների վերապատրաստում և նրանց համաձայնության ստացում
4. Լուսանկարահանում
5. Մասնակիցների հետ լուսանկարների քննարկում
6. Տվյալների վերլուծություն
7. Արդյունքների լուսաբանում (լուսանկարների ցուցադրություն)



Աղբյուր՝ **Rodríguez-Morales 2020**

Photovoice մերթող. օրինակ



Berbés-Blázquez, M. (2012)

**A Participatory Assessment of Ecosystem Services and Human Wellbeing
in Rural Costa Rica Using Photovoice**


Environmental Management, Vol. 49, pp. 862-875.

Photovoice մեթոդ. օրինակ



Լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդը կիրառվել է Կոստա Ռիկայի Վոլկան գետի ջրբաժանում

1. Արքայախնձորների մոնոկուլտուրայով լի ջրբաժանի էկոհամակարգային ծառայությունների գնահատում՝ համայնքային մակարդակում:
2. Գնահատել լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդի առավելությունները և սահմանափակումները՝ որպես էկոհամակարգերի և մարդկանց հարաբերությունների քարտեզագրման գործիք:



Photovoice մեթոդ. օրինակ



Նախապատրաստական փուլ

- Հետազոտողը 5 ամիս ապրել է համայնքում և ուսումնասիրել այն
- Նախագիծը ներկայացնելու և Photovoice մեթոդի կիրառման համար կամավորներ հավաքագրելու նպատակով նա հանդիպում էր կազմակերպել, որը բաց էր բոլորի համար:

Լուսանկարների միջոցով արտահայտման գործընթաց

- 2-ից 4 մասնակցից բաղկացած 11 խումբ
- Մասնակիցները որոշեցին երթուղին (3-4 ժամ տևողությամբ զբոսանք, 70 լուսանկար)
- Մասնակիցներին տվել էին թվային տեսախցիկներ: Հետազոտողն ուղեկցում էր նրանց:

Քննարկում՝ կիսահամակարգված ձևաչափով

- Լուսանկարների նշանակությունը
- Դասակարգում

Photovoice մերթոդ. օրինակ



Վերլուծություն

21 ընդհանուր թեմա՝ դասակարգված էկոհամակարգային ծառայությունների տարբեր խմբերի.

- Ո՞ր կենսաֆիզիկական ասպեկտներն էին ավելի հաճախ նշվել:
- Ո՞ր ծառայությունների հետ էին դրանք ասոցացվում:
- Բարեկեցության ո՞ր ասպեկտների հետ էին դրանք ավելի հաճախ ասոցացվում:



Վերլուծությունը ցուցաբերում է Էկոհամակարգային ծառայությունների յուսանկարների օրինակներ, որոնք մասնակիցներն արել են շրջայցերի ժամանակ:

Photovoice մեթոդ. օրինակ



Լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդը հնարավորությունները

- Համայնքները հնարավորություն ունեցան հասկանալու իրենց ուժեղ կողմերը և մտահոգությունները
- Մեթոդը խթանեց կառուցողական երկխոսություն՝ կարևոր հարցերի շուրջ
- Մեթոդը քաղաքականություն մշակողներին իրազեկելու հնարավորություն տվեց

Photovoice. գործնական կիրառություն



Կիրառեք լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդը ձեր գործընկերների, ընկերների կամ ընտանիքի անդամների հետ:

1. Հավաքվեք 2 կամ 3 ընկերներով, գործընկերներով կամ ընտանիքի անդամներով և գնացեք քաղաքով զբոսանքի: Մասնակիցներին խնդրեք անհատապես լուսանկարել այն ամենը, ինչը նպաստում է իրենց բարօրությանը:
2. Հավաքեք այդ բոլոր նկարները և ցույց տվեք մասնակիցներին: Հետևյալ հարցերի շուրջ քննարկում կազմակերպեք.
 - Ի՞նչ է ներկայացված նկարում: Ինչպե՞ս է նկարում պատկերվածը նպաստում բարօրությանը:
 - Արդյո՞ք նկատում եք ընդհանրություններ կամ ընդհանուր դասակարգեր:
 - Արդյո՞ք նկատում եք ընդհանուր կամ իրար հակասող ընկալումներ մասնակիցների շրջանում:
 - Կարո՞ղ եք միասին համաձայնության գալ այն 10 լուսանկարների շուրջ, որոնք ներկայացնում են մարդկանց բարօրության համար ամենակարևոր տարրերը:
3. Մտածեք, թե ինչպես է այս վարժությունն օգնել ձեզ դիտարկել քաղաքն այլ տեսանկյունից, և թե ինչպես այս տեղեկատվությունը կարող է օգնել քաղաքի հատակագծողներին բարելավել քաղաքի բնակության պայմանները:

Առաջադրանք

1. Լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդի մանրամասն նկարագրության և դրա կիրառման մի հետաքրքիր օրինակի մասին տեղեկանալու համար կարող եք կարդալ հետևյալ նյութերը.
 - Wang, C., Burris, M.A., 1997. Photovoice: Concept, methodology, and use for participatory needs assessment. Heal. Educ. Behav.
 - Beatriz Rodríguez-Morales, 2020. Looking at the margins. A gender approach to the perception of ecosystem services through geotagged photovoice. In Analysis of the social perception of ecosystem services on a peri-urban communal forest from northwestern Spain: a social-ecological approach. Escola de doutoramento internacional. Programa de doutoramento en enxeñaría para o desenvolvemento rural e civil. PhD thesis, Chapter 5: 187-302. Lugo 2020
2. Եթե հետաքրքրված եք արտահայտման այլ վիզուալ միջոցներով, կարող եք դիտել հետևյալ տեսանյութը՝
https://www.youtube.com/watch?v=rjL_lcmKiDg



Վերջ

Այս մոդուլը մշակվել է «Հայ-գերմանական ցանց՝ էկոհամակարգերի ծառայությունների բարելավման նպատակով ԱՏՀ հանրային մասնակցության խթանում՝ որպես կենսաբազմազանության պահպանման և կայուն զարգացման ապահովման միջոց» (GAtES) ծրագրի շրջանակում:

ace.aua.am/gates

Ֆինանսավորող կազմակերպություն՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության ֆինանսավորմամբ